- Խորը մաքրումներ (լսդերի տակի գոյացումների մաքրում և արմատների քերում)
- Ֆտորով բուժում
- Պլոմբներ
- Լաբորատորիայում մշակված շապիկներ
- Արմատախողովակների մշակում
- Ատամի հեռացում
- Նախապես պատրաստված շապիկներ
- Ամբողջական և մասնակի պրոթեզներ (որոշակի հանգամանքներում)
- Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ այլ ատամնաբուժական ծառայություններ

Երեխաների և մեծահասակների ատամնաբուժական ծառայությունների ամբողջական ցանկի համար կարդացեք այս ձեռնարկի Բաժին չորսը (4):

Շտապ ատամնաբուժական խնամք

Health Net -ը ապահովագրում է շտապ օգնություն պահանջող ատամնաբուժական խնամքը: Եթե Ձեզ անհրաժեշտ է ատամնաբույժ, բայց դա արտակարգ իրավիճակ չէ, անհապաղ սպասավորումը նշանակում է յոթանասուններկու (72) ժամվա ընթացքում:

Ատամնաբուժական գրասենյակի սովորական աշխատաժամերի ընթացքում Դուք կարող եք օգնության համար զանգահարել Ձեր ատամնաբույժին: Եթե գրասենյակի ժամից հետո փորձեք առաջին հերթին զանգահարել ձեր ատամնաբույժին: Եթե Ձեր ատամնաբույժը տեղում չէ, ապա յուրաքանչյուր պահի զանգահարեք Health Net՝ 1-800-977-7307 (TTY՝ 711)՝ աջակցություն ստանալու համար:



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-800-977-7307 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8:00 - 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հերթափոխ գծին՝ 711: Կամ այցելեք՝ at www.hndental.com.

Շտապ օգնության ատամնաբուժական ծառայություններ

Health Net -ը ապահովագրում է շտապ օգնությունն պահանջող ատամնաբուժական խնամքը: Շտապ օգնությունն պահանջող ատամնաբուժական վիճակը կարող է լինել ցավը, արյունահոսությունը կամ այտուցումը, որը կարող է վնասել, եթե չվերացվի: Արտակարգ ատամնաբուժական խնամքը հասանելի է օրական քսանչորս (24) ժամ, շաբաթական յոթ (7) օր: Շտապ օգնության ատամնաբուժական խնամքի համար հարկավոր է Health Net -ից թույլտվություն ստանալ:

Ատամնաբուժական գրասենյակի սովորական աշխատաժամերի ընթացքում Դուք կարող եք օգնության համար զանգահարել Ձեր ատամնաբույժին: Եթե գրասենյակի ժամից հետո փորձեք առաջին հերթին զանգահարել ձեր ատամնաբույժին: Եթե Ձեր ատամնաբույժը տեղում չէ, ապա յուրաքանչյուր պահի զանգահարեք Health Net՝ 1-800-977-7307 (TTY՝ 711)՝ աջակցություն ստանալու համար:

Արտակարգ իրավիճակի դեպքում զանգահարեք 911 կամ գնացեք մոտակա շտապ օգնության բաժանմունք: Եթե դուք տնից հեռու եք, ապա կարող եք գտնել ատամնաբույժ, որը ձեզ մոտ է, շտապ օգնություն ստանալու համար: Ատամնաբույժները, որոնք պայմանագիր չունեն առողջապահական ցանցի հետ, կարող են զանգել ձեզ շտապ օգնության համար: Եթե դուք վճարեք դեղատոմսով դեղի համար, մենք հետ կվճարենք ձեզ դրա համար:

Շտապ օգնությունն պահանջող բժշկական վիճակի համար զանգահարեք **911** կամ գնացեք մոտակա շտապ օգնության սենյակ:

Եթե օգնության կարիք ունեք, զանգահարեք՝ 1-800-977-7307 (TTY՝ 711): Մենք աշխատում ենք երկուշաբթիից ուրբաթ, 8:00 - 17:00: Չանգն անվճար է:

Որտեղ ատամնաբուժական խնամք ստանալ

Դուք կստանաք Ձեր հիմնական խնամքը Ձեր PCD-ից: Ձեր PCD-ն կտրամադրի Ձեր պարբերական խնամքի մեծ մասը: Ձեր PCD-ն կուղեգրի (կուղարկի) Ձեզ մասնագետի մոտ, եթե Դուք դրա կարիքն ունեք:

Ատամնաբուժական մատակարարների տեղեկատու

Health Net ատամնաբուժական Մատակարարի ուղեցույցն ընդգրկում է մատակարարներ, որոնք մասնակցում են Health Net-ի ցանցին: Ցանցը հանդիսանում է պրովայդերների խումբը, որը աշխատում է Health Net - ի հետ:

Health Net-ի Մատակարարների տեղեկատուն ընդգրկում է ատամնաբույժներ, մասնագետ ատամնաբույժներ, Դաշնության կողմից որակավորված առողջության կենտրոնները (Federally Qualified Health Centers, FQHCs), և Բնիկ ամերիկացիների առողջության կլինիկաները (Rural Health Clinics, RHCs):

Մատակարարի ուղեցույցն ընդգրկում է անուններ, պրովայդերի հասցեներ, հեռախոսի համարներ, աշխատանքային ժամեր և խոսակցական լեզուներ: Այն պատմում է, թե



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-800-977-7307 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8:00 - 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հերթափոխ գծին՝ 711: Կամ այցելեք՝ at www.hndental.com.

արդյոք մատուցողը ընդունում է Նոր հիվանդներ, մատակարարի մշակութային և լեզվական կարողությունները (այսինքն՝ մատակարարների գրասենյակում մատուցողի կամ հմուտ բժշկական թարգմանչի կողմից առաջարկվող լեզուները, Ներառյալ՝ ժեստերի ամերիկյան լեզուն), և արդյոք մատուցողն ավարտել է մշակութային հմտությունների ուսուցումը Այն տեղեկացնում է շենք մուտք գործելու մատչելիության մակարդակի մասին:

Դուք կարող եք Մատակարարների տեղեկատվություն գտնել առցանց՝ www.hndental.com հասցեով: Եթե Ձեզ անհրաժեշտ է Մատուցողների տպագիր տեղեկատու, զանգահարեք 1-800-977-7307 (TTY՝ 711):

Ատամնաբուժական մատակարարների ցանց

Ատամնաբուժական մատակարարների ցանցը ատամնաբույժների և ատամնաբուժական գրասենյակների խումբ է, որը աշխատում է Health Net-ի հետ: Դուք կստանաք Ձեր ապահովագրված ծառայությունները մեր ցանցի միջոցով:

Ցանցում

Ձեր ատամնաբուժական խնամքի կարիքների համար Դուք կօգտվեք Health Net-ի ցանցի ատամնաբույժների ծառայություններից: Ձեր կանխարգելիչ և պարբերական խնամքը կստանաք Ձեր PCD-ից: Դուք կօգտվեք նաև մեր ցանցի մասնագետների և այլ մատակարարների ծառայություններից:

Ցանցի մատակարարների ատամնաբուժական մատակարարների տեղեկատու ստանալու համար զանգահարեք 1-800-977-7307 (TTY՝ 711): Կամ կարող եք Մատակարարների տեղեկագիրքը գտնել առցանց՝ www.hndental.com հասցեով:

Եթե Ձեզ հարկավոր է հրատապ կամ շտապ օգնության ատամնաբուժական խնամք, զանգահարեք Ձեր PCD-ին: Եթե այց նշանակելու հարցում օգնություն է հարկավոր կամ եթե Ձեր բնակության տարածքում չեք գտնվում, ապա զանգահարեք 1-800-977-7307 (TTY՝ 711) հեռախոսահամարով:

Շտապ օգնություն պահանջող բժշկական խնամքի համար զանգահարեք **911** կամ զնացեք մոտակա շտապ օգնության սենյակ:

Ոչ ցանցային

Ցանցից դուրս գործող ատամնաբույժները՝ դա նրանք են, ովքեր Health Net-ի հետ աշխատելու պայմանագիր չունեն: Բացառությամբ անհետաձգելի կամ շտապ օգնության, գուցե ստիպված լինեք վճարել ցանցից դուրս գտնվող մատակարարների խնամքի համար: Եթե Ձեզ հարկավոր է ապահովագրված ատամնաբուժական ծառայություններ, հնարավոր է, որ Դուք կկարողանաք անվճար ստանալ դրանք ցանցից դուրս:

Եթե ցանցից դուրս ծառայությունների հարցում օգնության կարիք ունեք, զանգահարեք 1-800-977-7307 (TTY՝ 711): Եթե գտնվում եք մեր սպասարկման տարածքից դուրս և շտապ օգնություն չպահանջող խնամքի կարիք ունեք, անմիջապես զանգահարեք Ձեր PCD-ին: Կամ զանգահարեք՝ 1-800-977-7307 (TTY՝ 711):



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-800-977-7307 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8:00 - 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հերթափոխ գծին՝ 711: Կամ այցելեք՝ at www.hndental.com.

Եթե ցանցից դուրս կամ տարածքից դուրս խնամքի վերաբերյալ հարցեր ունեք, զանգահարեք՝ 1-800-977-7307 (TTY՝ 711):

Ատամնաբույժներ

Դուք կընտրեք Ձեր առաջնային խնամքի ատամնաբույժին (PCD) Health Net -ի Մատակարարների տեղեկատուից: Ձեր PCD-ն պետք է մասնակից ատամնաբույժ լինի: Սա նշանակում է, որ ատամնաբույժը գործում է մեր ցանցում: Մեր ատամնաբուժական մատակարարների տեղեկատուի պատճենը ստանալու համար զանգահարեք 1-800-977-7307 (TTY՝ 711):

Դուք պետք է նաև զանգահարեք, եթե ցանկանում եք վստահ լինել, որ Ձեր ընտրած PCD-ն նոր հիվանդներ է ընդունում: Եթե նախքան Health Net-ին անդամագրվելը Դուք այցելում էիք մի ատամնաբույժի որոշակի վիճակի համար, հավանաբար Դուք կկարողանաք շարունակել այցելել այդ ատամնաբույժին: Սա կոչվում է խնամքի շարունակականություն: Դուք կարող եք ավելին կարդալ խնամքի շարունակականության վերաբերյալ այս տեղեկագրի էջ երկուսում (2): Ավելին իմանալու համար զանգահարեք՝ 1-800-977-7307 (TTY՝ 711):

Առաջնային խնամքի ատամնաբույժ (PCD)

Նոր անդամները պետք է PCD ընտրեն Health Net-ին անդամակցելուց հետո եռետուն (30) օրվա ընթացքում: Դուք կարող եք որպես Ձեր PCD ընտրել ընդհանուր ատամնաբույժի:

Դուք կարող եք ընտրել Դաշնության կողմից որակավորված առողջության կենտրոնը (Federally Qualified Health Center, FQHC), համայնքային կլինիկան, Բնիկ ամերիկացիների առողջության կլինիկան կամ ատամնաբուժական ծառայություններ առաջարկող այլ առաջնային խնամքի հաստատությունը որպես Ձեր PCD, եթե դրանք ներառված են Health Net -ում և եթե դրանց համար որոակավում ունեք: Այս կենտրոնները գտնվում են այնպիսի տարածքներում, որտեղ չկան բազմաթիվ ատամնաբուժական խնամքի ծառայություններ:

Health Net-ի անդամ հանդիսացող Ձեր ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար Դուք կարող եք ընտրել միևնույն կամ տարբեր PCD-ներ:

Եթե եռետուն (30) օրվա ընթացքում Դուք PCD չընտրեք, մենք ինքներս կընտրենք մեկին, ով համագործակցում է Health Net-ի հետ:

Ձեր PCD-ն կանի հետևյալը՝

- Կծանոթանա Ձեր ատամնաբուժական կարիքներին
- Կծանոթանա Ձեր ատամնաբուժական կարիքներին
- Կտրամադրի Ձեզ անհրաժեշտ կանխարգելիչ և պարբերական ատամնաբուժական խնամքը
- Կուղեգրի (կուղարկի) Ձեզ մասնագետի մոտ, եթե դրա կարիքը լինի

Դուք կարող եք Մատակարարների տեղեկատուից գտնել PCD, որը գործում է Health Net-ի ցանցում: Մատակարարների տեղեկատուն պարունակում է նաև FQHC-ների



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-800-977-7307 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8:00 - 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հերթափոխ գծին՝ 711: Կամ այցելեք՝ at www.hndental.com.

ցանկը, որոնք համագործակցում են Health Net-ի հետ:

Կամ կարող եք Մատակարարների տեղեկագիրքը գտնել առցանց՝ www.hndental.com հասցեով: Կամ զանգահարեք 1-800-977-7307 (TTY՝ 711): Դուք կարող եք նաև զանգահարել իմանալու համար, թե արդյոք Ձեր ընտրած PCD-ն ընդունում է նոր հիվանդներ:

Ատամնաբույժների ընտրությունը

Դուք ավելի լավ գիտեք Ձեր ատամնաբուժական խնամքի կարիքները, այնպես որ, լավ կլինի, եթե ինքներդ ընտրեք Ձեր PCD-ն: Լավ կլինի, եթե մնաք միևնույն PCD-ի հետ, որպեսզի նա ծանոթ լինի Ձեր ատամնաբուժական խնամքի կարիքներին: Սակայն, եթե ցանկանում եք նոր PCD ընտրել, Դուք կարող եք ամիսը մեկ անգամ փոփոխություն կատարել: Դուք պետք է ընտրեք PCD, որը գործում է Health Net-ի ատամնաբուժական մատակարարների ցանցում և նոր հիվանդներ է ընդունում:

Ձեր նոր ընտյալը կդառնա Ձեր PCD-ն փոփոխությանը հաջորդող ամսվա առաջին օրը: Ձեր PCD-ն փոխելու համար զանգահարեք 1-800-977-7307 (TTY՝ 711) հեռախոսահամարով:

Մենք կարող է խնդրենք Ձեզ փոխել Ձեր PCD-ն, եթե PCD-ն նոր հիվանդներ չի ընդունում, հեռացել է մեր ցանցից կամ Ձեր տարիքի հիվանդներին խնամք չի մատուցում: Health Net -ը կամ Ձեր PCD-ն կարող է խնդրի Ձեզ ընտրել նոր PCD, եթե չեք կարող լեզու գտնել կամ համաձայնել Ձեր PCD-ի հետ կամ եթե բաց եք թողնում կամ ուշանում եք ժամադրություններից: Եթե մեզ պետք լինի փոխել Ձեր PCD-ին, մենք Ձեզ գրավոր կտեղեկացնենք այդ մասին: Եթե Դուք PCD-ներ փոխեք, Դուք փոստով կստանաք ատամնաբուժական ծրագրի նոր ID քարտ: Այն կպարունակի Ձեր նոր PCD-ի անունը: Չանգահարեք Անդամների սպասարկման բաժին, եթե հարցեր ունեք նոր ID քարտ ստանալու վերաբերյալ:

Հանդիպումներ և այցելություններ

Երբ Ձեզ ատամնաբուժական խնամք է հարկավոր՝

- Չանգահարեք Ձեր PCD-ին
- Չանգահարելիս՝ Ձեզ մոտ պատրաստ ունեցեք Ձեր Health Net-ի ID համարը
- Եթե գրասենյակը փակ է, հաղորդագրություն թողեք Ձեր անվամբ և հեռախոսահամարով
- Ժամադրությանը Ձեզ հետ տարեք Ձեր BIC և ատամնաբուժական ծրագրի ID քարտը
- Ժամադրությանը Ձեզ հետ տարեք Ձեր BIC և ատամնաբուժական ծրագրի ID քարտը
- Ժամանակին ներկայացեք ժամադրությանը
- Ամմիջապես զանգահարեք, եթե չեք կարող գալ ժամադրությանը կամ եթե ուշանում եք
- Պատրաստեք Ձեր հարցերը, եթե դրանց կարիքն ունենաք

Վճարում

Ապահովագրված ծառայությունների համար պետք չէ չհատուցվող գումարներ կամ



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-800-977-7307 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8:00 - 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հերթափոխ գծին՝ 711: Կամ այցելեք՝ [at www.hndental.com](http://www.hndental.com).

համավճարներ վճարել: Դուք Ձեր ատամնաբույժից վճարման հաշիվ չեք ստանա: Դուք կարող է ատամնաբույժից ստանաք Նպաստների բացատրություն (Explanation of Benefits, EOB) կամ հաշվետվություն: Դուք կարող է ատամնաբույժից ստանաք Նպաստների բացատրություն (Explanation of Benefits, EOB) կամ հաշվետվություն:

Եթե Դուք հաշիվ ստանաք, զանգահարեք 1-800-977-7307 (TTY` 711) հեռախոսահամարով: Հայտնեք մեզ գանձվող գումարի չափը, ծառայության ամսաթիվը և հաշվի պատճառը: Եթե Դուք հաշիվ ստանաք կամ ձեզ խնդրեն վճարել համավճար, Դուք կարող եք նաև ներկայացնել պահանջի ձևաթուղթ: Ձեզ հարկավոր կլինի գրավոր տեղեկացնել մեզ, թե ինչու էիք ստիպված վճարել ապրանքի կամ ծառայության համար: Մենք կուսումնասիրենք Ձեր պահանջը և կորոշենք, թե արդյոք Դուք կարող եք փոխհատուցում ստանալ:

Հարցերի կամ պահանջի ձևաթուղթ խնդրելու համար զանգահարեք 1-800-977-7307 (TTY 711) հեռախոսահամարով:

Ուղեգրեր

Ձեր PCD-ն Ձեզ ուղեգիր կտա մասնագետին այցելելու համար, եթե դրա կարիքն ունենաք: Մասնագետն ատամնաբույժ է, ով լրացուցիչ կրթություն ունի ստոմատոլոգիայի մեկ բնագավառում: Ձեր PCD-ն կհամագործակցի Ձեզ հետ մասնագետ ընտրելու հարցում: Ձեր PCD-ի գրասենյակը կարող է օգնել մասնագետին այցելելու ժամադրություն նշանակելու հարցում:

Ձեր PCD-ն կարող է Ձեզ ձևաթուղթ տալ, որպեսզի Ձեզ հետ տանեք մասնագետ ատամնաբույժի մոտ: Մասնագետ ատամնաբույժը կլրացնի ձևաթուղթը և այն հետ կուղարկի Ձեր PCD-ին: Եթե Ձեզ հարկավոր է մեր ուղեգրերի քաղաքականության պատճենը, ապա զանգահարեք 1-800-977-7307 (TTY` 711) հեռախոսահամարով:

Ձեզ ուղեգիր հարկավոր չէ հետևյալի համար`

- PCD-ի այցելություններ
- Հրատապ կամ շտապ օգնության խնամք



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժին` 1-800-977-7307 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը` 8:00 - 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հերթափոխ գծին` 711: Կամ այցելեք` at www.hndental.com.

Նախնական արտոնություն

Որոշ ծառայությունների համար Ձեր PCD-ն կամ ատամնաբույժը ստիպված են խնդրել մեր թույլտվությունը, նախքան Ձեզ խնամք տրամադրելը: Սա կոչվում է նախնական արտոնություն կամ նախնական հաստատում: Դա նշանակում է, որ Health Net-ը համաձայնում է, որ խնամքը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է (կարիքը կա):

Խնամքը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, եթե այն դադարեցնում կամ հեռացնում է ատամնաբուժական հիվանդությունը, վարակը և ցավը, ատամնաշարին վերադարձնում է իր ձևն ու գործելակերպը կամ ուղղում է դիմային տվյալները կամ դիսֆունկցիան: Ատամնաբուժական ծառայությունները պետք է համապատասխանեն բժշկական տեսանկյունից անհրաժեշտության վերաբերյալ Medi-Cal ծրագրի կանոններին:

Հետևյալ ծառայությունները միշտ նախապատվության կարիք ունեն, նույնիսկ, եթե դրանք ստանաք Health Net -ի ցանցի մատակարարից՝

- Արմատների ծորանների մշակում
- Շապիկներ
- Ամբողջական/մասնակի պրոթեզներ
- Խորը մաքրումներ (լնդերի տակի գոյացումների մաքրում և արմատների քերում)
- Ընդհանուր ցավագրկում և ներերակային ցավագրկում

Այլ ատամնաբուժական ծառայություններ, որոնք Ձեր ատամնաբույժը խորհուրդ է տալիս, կարող են նույնպես պահանջել նախնական հաստատում: Որոշ ծառայությունների համար, ինչպիսիք են՝ մասնագետի խնամքը կամ ցանցից դուրս ստացվող ատամնաբուժական ծառայությունը, Ձեզ հարկավոր է նախնական հաստատումը: Պարբերական խնամքի համար մենք որոշում կկայացնենք հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հրատապ խնամքի համար՝ յոթանասուներկու (72) ժամվա ընթացքում:

Մենք կուսումնասիրենք խնդրանքը և կորոշենք, թե արդյոք խնամքը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է և ծածկված: Մենք **չենք** վճարում մեր ուսումնասիրողներին, որպեսզի նրանք մերժեն ապահովագրությունը կամ ատամնաբուժական ծառայությունները: Եթե մենք չհաստատենք խնամքը, մենք կբացատրենք պատճառները: Health Net -ը կկապվի Ձեզ հետ, եթե մեզ անհրաժեշտ լինեն հավելյալ տեղեկություններ կամ լրացուցիչ ժամանակ Ձեր խնդրանքը ուսումնասիրելու համար:

Երկրորդ կարծիքներ

Ձեզ կարող է անհրաժեշտ լինել երկրորդ կարծիք ստանալ Ձեր PCD-ի կարծիքով Ձեզ անհրաժեշտ խնամքի, ախտորոշման կամ բուժման ծրագրի համար: Օրինակ՝ Դուք կարող եք երկրորդ կարծիք խնդրել, եթե վստահ չեք, թե արդյոք Ձեզ անհրաժեշտ է բուժում կամ վիրահատություն: Երկրորդ կարծիքը ստանալու համար զանգահարեք մեզ 1-800-977-7307 հեռախոսահամարով (TTY՝ 711) և մենք երկրորդ կարծիքի համար կուղղորդենք ձեզ ցանցի մատակարարին:

Մենք կվճարենք երկրորդ կարծիքի համար, եթե Ձեր կամ Ձեր ցանցի մատակարարը դա խնդրում է, և դուք ստանում եք երկրորդ կարծիքը ցանցային մատակարարից: Եթե Ձեզ



Զանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-800-977-7307 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8:00 - 17:00: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հերթափոխ գծին՝ 711: Կամ այցելեք՝ at www.hndental.com.

հարկավոր է հրատապ օգնության խնամք, մենք որոշում կկայացնենք յոթանասուներկու (72) ժամվա ընթացքում: Չանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-800-977-7307 (TTY՝ 711) հեռախոսահամարով:

Եթե մենք մերժենք երկրորդ կարծիքի համար Ձեր խնդրանքը, Դուք կարող եք այն բողոքարկել: Բողոքարկման մասին ավելին իմանալու համար ընթերցեք այս տեղեկագրի Գլուխ յոթը (7):

Խնամքի ժամանակին հասանելիություն

Health Net-ի ցանցային ատամնաբույժները նշանակումներ պետք է կատարի հետեւյալ ժամանակահատվածներում՝

- Պարբերաբար նշանակումներ (ներառյալ կանխարգելիչ խնամք)՝ չորս (4) շաբաթ
- Մասնագետի նշանակումներ – եռեսուն (30) աշխատանքային օր (21+ տարեկան); 30 օրացուցային օր (21 տարեկանից ցածր)
- Շտապ բուժօգնության նշանակումներ – յոթանասուներկու (72) ժամ
- Արտակարգ ատամնաբուժական խնամքը - պետք է հասանելի լինի օրական քսանչորս (24) ժամ, շաբաթական յոթ (7) օր:
- Հեռախոսային սպասման ժամանակը սովորական աշխատանքային ժամերին՝ տաս (10) րոպե
- Գրասենյակում սպասվող ժամանակը սովորական աշխատանքային ժամերին՝ նախատեսված նշանակումների համար՝ եռեսուն (30) րոպե

Ատամնաբուժական առողջության կրթության ծառայություններ

Ատամնաբուժական առողջական կրթության ծառայությունները կանխարգելիչ ծառայությունների և առաջնային ատամնաբուժական խնամքի այցելությունների մի մասն են: Անդամները կարող են օգտվել ատամների առողջության և դեղերի վերաբերյալ մի շարք հոդվածներից՝ www.healthnetdental.com հասցեով:



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-800-977-7307 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8:00 - 17:00: Չանգն անվճար է: Կամ գանգահարեք California-ի հերթափոխ գծին՝ 711: Կամ այցելեք՝ at www.hndental.com.

4. Նպաստներ և ծառայություններ

Ինչ է ապահովագրում Ձեր ատամնաբուժական ծրագիրը

Այս բաժինը բացատրում է Ձեր բոլոր փոխհատուցվող ծառայությունները՝ որպես Health Net-ի անդամ: Ձեր ապահովագրված ծառայություններն անվճար են, քանի դեռ դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են: Խնամքը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, եթե այն դադարեցնում կամ հեռացնում է ատամնաբուժական հիվանդությունը և ցավը, ատամնաշարին վերադարձնում է իր ձևն ու գործելակերպը կամ ուղղում է դիմային տվյալները կամ դիսֆունկցիան:

Մենք առաջարկում ենք ատամնաբուժական ծառայությունների հետևյալ տեսակները՝

Ծառայության տեսակ	Օրինակներ
☐ Ախտորոշիչ	Չննումներ և ռենտգեն
☐ Կանխարգելիչ	Մաքրումներ, բուժում ֆտորիդով, հերմետիկներ (երեխաների համար)
☐ Վերականգնողական	Լցումներ, պսակներ
☐ Էնդոդոնտիկ	Պուլպոտոմիա, արմատների ծորանների մշակում
☐ Պերիդոնտալ	Խորը մաքրումներ
☐ Հեռացվող պրոստոդոնտիկ ծառայություններ	Ամբողջական և մասնակի պրոթեզներ, հենակներ
☐ Բերանի խոռոչի և դիմաձևոտային վիրահատություն	Հեռացում
☐ Օրթոդոնտիա	Բրեկետներ (ծանր արատավոր կծմամբ երեխաների համար)
☐ Լրացուցիչ	Ցավազրկում, ընդհանուր ցավազրկում

Կարդացեք նպաստների ամփոփումը և յուրաքանչյուր բաժինը ստորև, որպեսզի ավելին իմանաք այն ծառայության մասին, որ կարող եք ստանալ:



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-800-977-7307 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8:00 - 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հերթափոխ գծին՝ 711: Կամ այցելեք՝ at www.hndental.com. 30

Նպաստների ամփոփում

Ստորել բերված է մեծահասակների եւ երեխաների համար ատամնաբուժական նպաստների ամփոփագիր՝



Նպաստ է



Նպաստ չէ

	Ամբողջ ծավալով	Սահման ափակ ծավալով	Հղիության և հետ կապված ծառայությ ություններ	Հաստատութ յունում բնակվող (SNF/ICF)
Բուժգործողություն				
Ներբերանային զննում (3 տարեկանից ցածր տարիքի)	✓	✗	✗	✓
Նախնական զննում (3+ տարեկան)	✓	✗	✓	✓
Նախնական զննում (3+ տարեկան)	✓	✗	✓	✓
Պարբերական մաքրումներ (Պրոֆիլակտիկա)	✓	✗	✓	✓
Ֆտորիդ	✓	✗	✓	✓
Վերականգնողական ծառայություններ - պլոմբներ / շապիկներ	✓	✗	✓	✓
Շապիկներ*^	✓	✗	✓	✓
Լնդերի տակի գոյացումների մաքրում և արմատների քերում (խորը մաքրում)**	✓	✗	✓	✓
Պարոդոնտոլոգիական սպասարկում (լնդեր)	✓	✗	✓	✓
Ատամների արմատախողովակների մշակում (առջևի)	✓	✗	✓	✓
Հետին ատամի արմատախողովակների մշակում (հետևում)^	✓	✗	✓	✓
Մասնակի պրոթեզներ^	✓	✗	✓	✓
Ամբողջական պրոթեզներ	✓	✗	✓	✓
Բերանի խոռոչի և դիմաձևոտային վիրահատություն	✓	✓	✓	✓
Շտապ օգնության ծառայություններ	✓	✓	✓	✓

Բացառություններ՝

*1. Նպաստ չի ստանում, եթե 13 տարեկանից ցածր է:

^2. 21 տարեկանից բարձր տարիք ունեցողներին թույլատրվում է հատուկ
հանգամանքներում:

**Նպաստ չի ստանում, եթե 13 տարեկանից ցածր է: Թույլ է տրվում հատուկ
հանգամանքներում:



Ձանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-800-977-7307 (TTY/TDD
711) հեռախոսահամարով: Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ,
ժամը՝ 8:00 - 17:00: Ձանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի
հերթափոխ գծին՝ 711: Կամ այցելեք՝ at www.hndental.com.

Տելեդենտիստիկայի ծառայություններ

Տելեդենտիստիկան ծառայություններ ստանալու միջոց է՝ առանց ձեր ատամնաբույժի նույն ֆիզիկական վայրում գտնվելու: Տելեդենտիստիկան կարող է ներառել կենդանի զրույց ձեր մատակարարի հետ: Կամ տելեդենտիստիկան կարող է ներառել տեղեկություններ ձեր ատամնաբույժի հետ առանց կենդանի զրույցի:

Կարևոր է, որ և՛ դուք, և՛ ձեր ատամնաբույժը համաձայնեք, որ որոշակի ծառայության համար տելեդենտիստիկայի օգտագործումը համապատասխանում է ձեզ: Դուք կարող եք կապվել ձեր ատամնաբույժի հետ՝ իմանալու համար, թե որ տեսակի ծառայությունները կարող են հասանելի լինել տելեդենտիստիկայի միջոցով:

Ծառայությունների հաճախականությունը

Ատամնաբուժական ծառայություններ ծածկված են բժշկական անհրաժեշտության առկայության դեպքում: Ատամնաբուժական ծառայություններ ծածկված են բժշկական անհրաժեշտության առկայության դեպքում: Ստորել բերված են ընդհանուր ծառայություններ, որտեղ կան սահմանափակումներ՝

- Չնսումներ - ամեն վեց (6) ամիսը մեկ (21 տարեկանից ցածր); Ամեն տասներկու (12) ամիսը մեկ (21+ տարեկան)
- Bite-wing ռենտգենյան ճառագայթներ - ամեն վեց (6) ամիսը մեկ
- Ողջ բերանի խոռոչի ռենտգենյան ճառագայթներ - ամեն եռետուևեց (36) ամիսը մեկ (11+ տարեկան)
- Պանորամային ճառագայթներ - ամեն եռետուևեց (36) ամիսը մեկ
- Կարիեսի ռիսկի գնահատում – Ցածր ռիսկ յուրաքանչյուր վեց (6) ամիսը մեկ; Չափավոր ռիսկ յուրաքանչյուր չորս (4) ամիսը մեկ, Բարձր ռիսկ յուրաքանչյուր երեք (3) ամիսը մեկ; 0-6 տարեկան բոլոր ռիսկային մակարդակների համար
- Ատամների մաքրում - ամեն վեց (6) ամիսը մեկ (21 տարեկանից ցածր); Ամեն տասներկու (12) ամիսը մեկը (21+ տարեկան)
- Լուծվող ֆտորիդ - ամեն չորս (4) ամիսը մեկ (0-6 տարեկան); Ամեն վեց (6) ամիսը մեկ (6 - 21 տարեկան), Ամեն տասներկու (12) ամիսը մեկ (21+ տարեկան)
- Ատամնաբուժական պահպանիչներ- ամեն եռետուևեց (36) ամիսը մեկ (միայն 21 տարեկանից ցածր) միայն սեղանատամների համար
- Պլոմբեր - ամեն տասներկու (12) ամիսը մեկ (մեկ մանկական ատամ); Ամեն եռետուևեց (36) ամիսը մեկ (մշտական ատամների համար)
- Շապիկներ - Ամեն հինգ (5) տարին մեկ (13+ տարեկան)
- Խորը մաքրում (քերում/արմատի պլանավորում) - ամեն քսանչորս (24) ամիսը մեկ (տարիքը՝ 13+)
- Ամբողջական և մասնակի պրոթեզներ - Ամեն հինգ (5) տարին մեկ
- Պրոթեզների վերականգնում և ուղղում - Տարին երկու (2) անգամ



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-800-977-7307 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8:00 - 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հերթափոխ գծին՝ 711: Կամ այցելեք՝ at www.hndental.com.

Լրացուցիչ մանկական ատամնաբուժական խնամքի ծառայություններ

Վաղ և պարբերական գնման, ախտորոշման և բուժման (Early and Periodic Screening, Diagnostic and Treatment, EPSDT)

ծառայությունները

Մենք ապահովագրում ենք EPSDT ծառայությունները: EPSDT-ի ծառայությունների մեջ մտնում են այն բոլոր ծառայությունները, որոնք փոխհատուցվում են Denti-Cal-ի կողմից: Եթե մինչև 21 տարեկան եք, կարող եք ստանալ լրացուցիչ ծառայություններ, որոնք չեն ապահովագրվում Denti-Cal-ի կողմից, քանի դեռ դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են: Այս ծառայությունները լրացում են կանոնավոր Denti-Cal-ի նպաստներին, նույնիսկ եթե ծառայությունները գերազանցել են թույլատրելի հաճախականության սահմանները: Եթե Ձեզ անհրաժեշտ է այս լրացուցիչ ծառայություններից մեկը, ապա ձեր ատամնաբույժը մեզ հարց կտա: Եթե Ձեզ անհրաժեշտ է այս լրացուցիչ ծառայություններից մեկը, ապա ձեր ատամնաբույժը մեզ հարց կտա:

Եթե ցանկանում եք լրացուցիչ տեղեկություններ EPSDT-ի նպաստների մասին, գանգահարեք 1-800-977-7307 (TTY 711):

Ոչ շտապ օգնության բժշկական փոխադրումներ

Դուք իրավունք ունեք օգտագործել Ոչ շտապ օգնության բժշկական փոխադրում (Non-Emergency Medical Transportation, NEMT), երբ Դուք ֆիզիկապես կամ առողջական պատճառներով ի վիճակի չեք հասնել Ձեր բժշկական ժամադրությանը ավտոմեքենայով, ավտոբուսով, գնացքով կամ տաքսիով, և ծրագիրը վճարում է Ձեր ատամնաբուժական վիճակի համար:

NEMT-ն շտապ օգնության մեքենա է, միկրոավտոբուս, անվասայլակի միկրոավտոբուս կամ օդային փոխադրամիջոց: NEMT-ն ավտոմեքենա, ավտոբուս կամ տաքսի չէ: Health Net-ը թույլ է տալիս Ձեր առողջական վիճակի համեմատ ամենացածր գնով NEMT, երբ Ձեզ փոխադրամիջոց է հարկավոր ժամադրությանը գնալու համար: Սա նշանակում է, օրինակ, եթե Դուք ֆիզիկապես և առողջական վիճակից ելնելով կարող եք ճամփորդել անվասայլակի միկրոավտոբուսով, Health Net -ը չի վճարի շտապ օգնության մեքենայի համար: Սա նշանակում է, օրինակ, եթե Դուք ֆիզիկապես և առողջական վիճակից ելնելով կարող եք ճամփորդել անվասայլակի միկրոավտոբուսով, Health Net -ը չի վճարի շտապ օգնության մեքենայի համար:

NEMT-ն պետք է օգտագործվի, երբ այն՝

- ֆիզիկապես և առողջական վիճակի պատճառով անհրաժեշտ է, ինչպես դա որոշվել է բժշկի գրավոր դեղատոմսով, կամ
- Դուք ֆիզիկապես և առողջական վիճակի պատճառով չեք կարող օգտվել ավտոբուսից, տաքսիից, ավտոմեքենայից կամ միկրոավտոբուսից, որպեսզի գնաք Ձեր ժամադրությանը,
- Նախորոք հաստատված է Health Net -ի կողմից՝ բժշկի կողմից տրամադրված գրավոր դեղատոմսի հիման վրա:

NEMT խնդրելու համար խնդրում ենք գանգահարել Health Net՝ 1-800-977-7307 (TTY



Ձանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-800-977-7307 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8:00 - 17:00: Ձանգն անվճար է: Կամ գանգահարեք California-ի հերթափոխ գծին՝ 711: Կամ այցելեք՝ at www.hndental.com.

711) հեռախոսահամարով Ձեր ժամադրությունից առնվազն տաս (10) աշխատանքային օր առաջ (երկուշաբթի-ուրբաթ): Շտապ նշանակումների համար զանգահարեք հնարավորինս շուտ: Չանգահարելիս խնդրում ենք պատրաստել ձեր անդամի ID քարտը:

NEMT- ի սահմաններ

Health Net -ի կողմից ապահովագրված ժամադրություններին գնալու և այնտեղից վերադառնալու համար NEMT ստանալու սահմանափակումներ չկան, երբ դրա համար բժշկի նշանակում եք ստացել:

Ի՞նչ չի կիրառվում

Տրանսպորտը չի տրամադրվի, եթե Ձեր ֆիզիկական և բժշկական վիճակը Ձեզ թույլ է տալիս հասնել Ձեր բժշկական այցի նշանակման վայր մեքենայով, ավտոբուսով, տաքսիով կամ այլ հասանելի տրանսպորտով: Փոխադրում չի տրամադրվի, եթե ծառայությունը ապահովագրված չէ Health Net-ի կողմից: Փոխադրում չի տրամադրվի, եթե ծառայությունը ապահովագրված չէ Health Net-ի կողմից:

Արժեքն անդամի համար

Այն անվճար է, եթե փոխադրումը լիազորված է Health Net-ի կողմից:

Ոչ բժշկական փոխադրում

Դուք կարող եք Ոչ բժշկական փոխադրում (Non-Medical Transportation, NMT) օգտագործել, եթե Դուք՝

- Գնում եք մատակարարի կողմից նշանակված և Health Net-ի կողմից ապահովագրված ժամադրության կամ վերադառնում եք այնտեղից:

Health Net-ը թույլ է տալիս օգտագործել մեքենայի, տաքսիի, ավտոբուսի կամ բժշկական նշանակության այլ բժշկական ծառայություններից օգտվելու համար նախատեսված մեքենայից, տաքսիից, ավտոբուսից կամ անձնական այլ միջոցից, այդ թվում՝ կիրլոմետրաժի փոխհատուցումը, երբ տրանսպորտը հանդիսանում է շահառուի կողմից կազմակերպված մասնավոր մեքենա, և չի հանդիսանում տրանսպորտային բրոքերի, ավտոբուսի, տաքսիի կամ երկաթուղային այլ միջոց: Health Net-ը թույլ է տալիս Ձեր առողջական վիճակի համար ամենացածր գնով NMT-ն, որը հասանելի է Ձեր ժամադրությանը գնալու ժամանակ:

NMT ծառայություններ խնդրելու համար խնդրում ենք զանգահարել Health Net՝ 1-800-977-7307 (TTY 711) հեռախոսահամարով կամ Ձեր ժամադրությունից առնվազն տաս (10) աշխատանքային օր առաջ (երկուշաբթի-ուրբաթ) կամ զանգահարեք հնարավորինս շուտ, երբ հրատապ այց ունեք: Չանգահարելիս խնդրում ենք պատրաստել ձեր անդամի ID քարտը:

NMT-ի սահմանափակումները

Health Net -ի կողմից ապահովագրված ժամադրություններին գնալու և այնտեղից վերադառնալու համար NMT ստանալու սահմանափակումներ չկան, եթե դրա համար բժշկի նշանակում եք ստացել:



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-800-977-7307 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8:00 - 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հերթափոխ գծին՝ 711: Կամ այցելեք՝ at www.hndental.com.

Ի՞նչ չի կիրառվում

NMT չի կիրառվում, եթե

- Շտապ օգնության մեքենան, միկրոավտոբուսը, անվասայլակով միկրոավտոբուսը կամ NEMT-ի այլ ձևերը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են ապահովագրված ծառայություններ ստանալու համար:
- Ծառայություններն ապահովագրված չեն Health Net-ի կողմից: Ապահովագրված ծառայությունների ցանկը կարելի է գտնել այս տեղեկագրքում:

Արժեքն անդամի համար

Ոչ մի ծախս չկա, երբ փոխադրվում թույլատրվում է Health Net-ի կողմից:

Ի՞նչ չի ապահովագրում Ձեր առամնաբուժական ծրագիրը

Առամնաբուժական ծառայություններ

Medi-Cal-ը ապահովագրում է այս առամնաբուժական ծառայությունները 21 տարեկանից հետո՝

- Շապիկներ բարձր ազնիվ մետաղից (ոսկի)
- Լնդերի ոռոգում
- Ընթացակարգեր, որոնք համարվում են «գլոբալ» կամ «ներառական», չապահովագրված նպաստով
- Ճկուն բազային մասնակի պրոթեզներ
- Մասնագետ առամնաբույժի խորհրդատվություն
- Օրթոդոնտիկ բուժում (բրեկետներ)
- Լաբորատոր շապիկներ ետին ատամների վրա, որոնք չեն աջակցում գոյություն ունեցող կամ հաստատված բուժման պլանավորված պրոթեզը
- Լաբորատոր շապիկներ առջևի ատամների վրա, որոնք չեն ցուցադրում ատամի փչացում, ինչպիսիք են՝ կծման մակերևույթի 1/2 կորուստը, ատամի 1/2 երկարությունը կամ 1/2 ամբողջ ատամը:
- Վերականգնողական և շապիկի ծառայությունները նպաստ չեն հանդիսանում, երբ ատամի կանխատեսումը կասկածելի է ոչ վերականգնողականության կամ պարոդոնտի ներգրավման պատճառով:
- Վերականգնողական և շապիկի ծառայությունները, որոնք տրամադրվում են բացառապես մաշվածության, քայքայման, էրոզիայի կամ կոսմետիկ նպատակներով կորած ատամի կառուցվածքը փոխարինելու համար, նպաստ չեն:
- Խորը մաքրում/մասշտաբավորում, երբ ռենտգենյան ճառագայթները ցույց չեն տալիս զգալի քանակությամբ ոսկրերի կորուստ և լորձաթաղանթից ներքև հաշվարկային նստվածքների առկայություն:
- Մետաղի վրա հիմնված մասնակի առամնաշարեր, եթե մյուս կամարի վրա գոյություն չունի գոյություն ունեցող կամ հաստատված բուժում, որը նախատեսում է լիարժեք պրոթեզ
- Ֆիքսված մասնակի պրոթեզներ (կամուրջներ), բացառությամբ, եթե բավարարում են բացառիկ բժշկական վիճակների պայմաններին
- Իմպլանտներ և իմպլանտների հետ կապված ծառայություններ, բացառությամբ, եթե բավարարում են բացառիկ բժշկական վիճակների պայմանները Բացառիկ



Ձանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-800-977-7307 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8:00 - 17:00: Ձանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հերթափոխ գծին՝ 711: Կամ այցելեք՝ at www.hndental.com.

բժշկական պայմանները ներառում բայց չեն սահմանափակվում հետևյալով՝

- Բերանի խոռոչի քաղցկեղ, որը պահանջում է աբլատիվ վիրահատություն և (կամ) ճառագայթում, ինչը հանգեցնում է ավելոյալի ոսկրերի քայքայման, որտեղ բացակայող ոսկրային կառույցները չեն կարողանում ապահովել սովորական ատամնաբուժական պրոթեզներ:
- Ստորին ծնոտի և/կամ վերին ծնոտի լուրջ ատրոֆիա, որը հնարավոր չէ շտկել վեստիբուլյար երկարաձգման կամ ոսկրերի մեծացման ընթացակարգերով, և հիվանդը չի կարողանում օգտագործել սովորական պրոթեզները:
- Կմախքի դեֆորմացիաներ, որոնք բացառում են սովորական պրոթեզների օգտագործումը (օրինակ՝ արտրոգրիպոզ, Էկտոդերմալ դիսպլազիա, մասնակի անոդոնտիա և կլեյդոկրանիալ դիսպլազիա):
- Ծնոտի, դեմքի կամ գլխի տրավմատիկ ոչնչացում, որտեղ մնացած ոսկրային կառույցները չեն կարողանում աջակցել սովորական ատամնաբուժական պրոթեզներին:

Լուս Անջելես վարչաշրջանից դուրս տրամադրվող ատամնաբուժական ծառայությունները չեն ապահովագրվում, եթե միայն տրամադրված չեն որպես շտապ օգնության խնամք: Եթե հարցեր ունեք կամ ցանկանում եք ավելին իմանալ ատամնաբուժական ծառայությունների մասին, զանգահարեք Medi-Cal Dental՝ 1- 800-322-6384 (TTY 1-800-735-2922) հեռախոսահամարով: Դուք կարող եք նաև այցելել Medi-Cal Dental Program՝ www.smilecalifornia.org կայք:

Ծառայություններ, որ չեք կարող ստանալ Health Net կամ Medi-Cal-ի միջոցով

Կան որոշ ծառայություններ, որոնք ապահովագրված չեն ո՛չ Health Net -ի, ո՛չ էլ Medi-Cal-ի կողմից, ներառյալ՝

- Կալիֆորնիայի մանկական ծառայություններ (CCS)
- Ոչ ատամնաբուժական ծառայություններ
- Որևէ ատամնաբուժական ծառայություն, որը չի փոխհատուցվում Medi-Cal-ի ատամնաբուժական ծրագրի կողմից
- Ատամնաբուժական ծառայություններ, որը սկսվել է ապահովագրվելուց առաջ կամ ապահովագրությունը դադարեցվելուց հետո
- Բուժգործողություններ, սարքավորումներ կամ վերականգնումներ Զուրկաձևոտային հոդի դիսֆունկցիան (Temporomandibular Joint Dysfunction, TMJ) բուժելու համար
- Ատամնաբուժական ծառայություններ, որոնք որոշվում են կոսմետիկ նպատակներով, հիմնված մասնագիտական վերանայման վրա
- Ատամնաբուժական ծառայություններ, որոնք չեն որոշվում կոսմետիկ նպատակներով հիմնված մասնագիտական վերանայման հիման վրա
- Բուժգործողություններ, որոնք իրականացվել են ատամի կառուցվածքը վերականգնելու համար, որ խախտվել էր մաշվելու, Էրոզիայի, հնացման կամ քայքայման պատճառով
- Բուժգործողություններ կամ սարքավորումներ, որոնք տրամադրվում են ատամնաբույժի կողմից, ով մասնագիտացած է պրոթեզավորման ծառայություններում:



Զանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-800-977-7307 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8:00 - 17:00: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հերթափոխ գծին՝ 711: Կամ այցելեք՝ at www.hndental.com.

- Ատամնաբուժական ծառայությունները երրորդ մուլի ատամների (իմաստության ատամների) հեռացման համար, որոնք չունեն իմաստային անկման նշաններ, անդառնալից ցավ եւ վարակ և/կամ չեն արգելում այլ ատամների ժայթքումը:
- Ատամնաբուժական ծառայություններ, որ կփոխեն ատամների հավաքման ձևը՝ կծելու և ծամելու համար
- Որևէ ծառայություն, որը մատուցվում է Ձեզ կցված ատամնաբուժական գրասենյակից դուրս, եթե այն հատուկ լիազորված չէ Health Net-ի կողմից:
- Որևէ պարբերական ատամնաբուժական ծառայություն, որը մատուցվում է ատամնաբույժի կամ մասնագետ ատամնաբույժի կողմից ստացիոնար/ամբուլատոր հիվանդանոցային պայմաններում

Ավելին իմանալու համար կարդացեք բոլոր բաժինները ստորև: Կամ զանգահարեք՝ 1-800-977-7307 (TTY՝ 711):

Կալիֆորնիայի մանկական ծառայություններ (CCS)

CCS-ը պետական ծրագիր է, որը վերաբերում է 21 տարեկանից ցածր երեխաներին որոշակի առողջական վիճակին, հիվանդությունների կամ քրոնիկական առողջական խնդիրներին և որոնք բավարարում են CCS ծրագրի կանոններին: Եթե Health Net-ը կամ Ձեր PCP-ն համարում են, որ Ձեր երեխան ունի CCS-ին համապատասխան առողջական վիճակ, նրան կուղեգրեն CCS ծրագիր:

CCS ծրագրի աշխատակիցները որոշելու են, թե արդյոք Ձեր երեխան համապատասխանում է CCS ծառայություններ ստանալու պահանջներին: Եթե ձեր երեխան համապատասխանում է այս տեսակի խնամք ստանալու պահանջներին, CCS-ի տրամադրողները նրան կբուժեն ըստ CCS կանոնների: Health Net կշարունակի փոխհատուցել ծառայությունների տեսակները, որոնք չեն առնչվում CCS-ի պայմանների հետ, ինչպիսիք են ֆիզիկական ծառայությունները, պատվաստանյութերը և well-child ստուգումները:

Health Net-ը չի ապահովագրում CCS ծրագրի կողմից մատուցվող խնամքը: Որպեսզի CCS-ը ապահովագրի այս խնդիրները, CCS-ը պետք է հաստատի մատակարարին, ծառայությունները և սարքավորումները: CCS-ը չի ապահովագրում բոլոր խնդիրները: CCS-ն ներառում է առողջապահական բոլոր պայմանները, որոնք ֆիզիկապես անջատված են կամ պետք է բուժվեն դեղորայքի, վիրաբուժության կամ վերականգնման միջոցով: CCS-ը ապահովագրում է երեխաների, որոնք ունեն հետևյալ խնդիրները՝

- Բնածին սրտի արատ
- Զաղցկեղներ
- Ուռուցքներ
- Հեմոֆիլիա
- Մանգաղաբջջային սակավարյունություն
- Վահանագեղձի խնդիրներ
- Շաքարախտ
- Երիկամային լուրջ քրոնիկական խնդիրներ
- Լյարդի հիվանդություն
- Աղիքային հիվանդություն
- Գայլի շրթունք/երախ
- Սպինա բիֆիդա



Զանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-800-977-7307 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8:00 - 17:00: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հերթափոխ գծին՝ 711: Կամ այցելեք՝ at www.hndental.com.

- Լսողության կորուստ
- Կատարակտ
- Մանկական ուղեղային կաթված
- Անկառավարելի նոպաներ
- Ռևմատոիդ հոդաբորբ
- Մկանային դիստրոֆիա
- ՁԻԱՀ
- Գլխի, ուղեղի կամ ողնաշարի ծանր վնասվածքներ
- Ծանր այրվածքներ
- Խիստ շեղված ատամներ

Նահանգը վճարում է CCS ծառայությունների համար: Եթե Ձեր երեխան իրավունակ չէ CCS ծրագրի ծառայությունների համար, նա կարող է շարունակել բժշկական տեսանկյունից անհրաժեշտ խնամք ստանալ Health Net-ից: CCS-ի մասին ավելին իմանալու համար գանգահարեք 1-800-977-7307 (TTY 711) հեռախոսահամարով:

Այլ ծրագրեր և ծառայություններ Medi-Cal ունեցող մարդկանց համար

Կան այլ ծրագրեր և ծառայություններ Medi-Cal ունեցող մարդկանց համար, ներառյալ՝

Health Net-ը, Առողջապահական կրթության վարչությունը չի առաջարկում անվճար ծրագրեր, ծառայություններ և ռեսուրսներ, որոնք կօգնեն Medi-Cal-ի անդամներին մնալ առողջ և կառավարել իրենց առողջական խնդիրները: Անդամներն ու մատուցողները կարող են ավելի շատ տեղեկատվություն ստանալ առկա ծրագրերի, ծառայությունների և ռեսուրսների մասին՝ այցելելով՝

https://www.healthnet.com/content/healthnet/en_us/members/medi-cal/health-net-medi-cal-wellness-programs.html կամ գանգահարելով Առողջապահական կրթության անվճար գծին՝ (800) 804-6074 (TTY՝ 711):

Կարդացեք ստորև բերված բաժիններից յուրաքանչյուրը՝ Medi-Cal ունեցող մարդկանց համար այլ ծրագրերի և ծառայությունների մասին ավելին իմանալու համար: Անդամներն ու մատուցողները կարող են ավելի շատ տեղեկատվություն ստանալ առկա ծրագրերի, ծառայությունների և ռեսուրսների մասին՝ այցելելով՝ <https://www.dhcs.ca.gov/services/Pages/Medi-CalDenti-Cal.aspx>

Medi-Cal-ի միջոցով հասանելի լրացուցիչ ծրագրերից մի քանիսը ներառում են՝

Medi-Cal Waivers՝ ծրագիր, որը լրացուցիչ ծառայություններ էր մատուցում անհատների որոշակի խմբերին, սահմանափակ ծառայություններ՝ որոշակի աշխարհագրական տարածքներին և բժշկական ապահովում էր տրամադրում այն անձանց, ովքեր այլապես կարող էին Medi-Cal-ի իրավունք չունենալ:

Medicare Մաս D դեղատոմսերի դեղերի ծրագիր՝ Օրենքը ներառում է դեղատոմսով դեղերի նպաստ Medicare-ի Մաս D-ի անդամներին:



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-800-977-7307 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:00 - 17:00: Չանգն անվճար է: Կամ գանգահարեք California-ի հերթափոխ գծին՝ 711: Կամ այցելեք՝ at www.hndental.com.

Տեսողության խնամքի ծրագիր՝ Առողջության նպաստ, որը ծածկված է Medi-Cal-ի ներքո իրավասու անդամների մեծամասնության համար:

Նպաստների համակարգում

Health Net-ն առաջարկում է ծառայություններ՝ Ձեր ատամնաբուժական խնամքի կարիքների համակարգման հարցում Ձեզ անվճար օգնելու համար: Եթե Ձեր կամ Ձեր երեխայի ատամնաբուժական խնամքի վերաբերյալ հարցեր կամ մտահոգություններ ունեք, զանգահարեք 1-800-977-7307 (TTY՝ 711) հեռախոսահամարով:



Զանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-800-977-7307 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8:00 - 17:00: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հերթափոխ գծին՝ 711: Կամ այցելեք՝ at www.hndental.com.

5. Երեխաների և երիտասարդների կանխարգելիչ ատամնաբուժական ծառայություններ

Health Net-ն ինքնաբերաբար տալիս է մինչև 21 տարեկան երեխաների և երիտասարդների ատամնաբուժական ծառայություններ՝ համոզվելու համար, որ նրանք ստանում են ճիշտ կանխարգելիչ ատամնաբուժական ծառայություններ: Այս գլուխը բացատրում է այս ծառայությունները:

Ատամնաբուժական ստուգումներ

Ձեր երեխայի լսողերը մաքուր պահեք՝ ամեն օր նրբորեն սրբելով լսողերը լաթով: Մոտ չորսից վեց ամսվա ընթացքում «ատամների հանումը» կսկսվի, երբ կաթնատամները սկսեն դուրս գալ: Դուք պետք է պայմանավորվեք ձեր երեխայի առաջին ատամնաբուժական այցի համար, երբ դուրս գա նրա առաջին ատամը կամ նրա ծննդյան առաջին տարեդարձին, որն առաջինը տեղի ունենա:

Հետևյալ Medi-Cal ատամնաբուժական ծառայությունները անվճար կամ էժան ծառայություններ են՝

1-ից 4 տարեկան երեխաներ՝

- Երեխայի առաջին ատամնաբուժական այցը
- Երեխայի առաջին ատամնաբուժական զննումը
- Ատամնաբուժական զննումները (յուրաքանչյուր 6 ամիսը մեկ, ծնվելուց մինչև 3 տարեկան 3 ամիսը մեկ)
- Ռենտգենյան ճառագայթներ
- Ատամների մաքրում (6 ամիսը մեկ անգամ)
- Ֆտորի մաքրում (6 ամիսը մեկ անգամ)
- Պլոմբներ



Ձանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-800-977-7307 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8:00 - 17:00: Ձանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հերթափոխ գծին՝ 711: Կամ այցելեք՝ at www.hndental.com.

5 | Երեխաների և երիտասարդների կանխարգելիչ ատամնաբուժական ծառայություններ

- Ատամի հեռացում
- Շտապ օգնության ծառայություններ
- Ամբուլատոր ծառայություններ
- Հանգստացնող միջոցներ (եթե դա անհրաժեշտ է բժշկական տեսանկյունից)

5-12 տարեկան երեխաներ՝

- Ատամնաբուժական զննումները (6 ամիսը մեկ անգամ)
- Ռենտգենյան ճառագայթներ
- Ատամների մաքրում (6 ամիսը մեկ անգամ)
- Ֆտորի մաքրում (6 ամիսը մեկ անգամ)
- Սեղանատամի հերմետիկ կյութեր
- Պլոմբներ
- Արմատների ծորանների մշակում
- Ատամի հեռացում
- Շտապ օգնության ծառայություններ
- Ամբուլատոր ծառայություններ
- Հանգստացնող միջոցներ (եթե դա անհրաժեշտ է բժշկական տեսանկյունից)

13-20 տարեկան երեխաներ՝

- Ատամնաբուժական զննումները (6 ամիսը մեկ անգամ)
- Ռենտգենյան ճառագայթներ
- Ֆտորի մաքրում (6 ամիսը մեկ անգամ)
- Ատամների մաքրում (6 ամիսը մեկ անգամ)
- Օրթոդոնտիկա (բրեկետներ) որակավորվողների համար
- Պլոմբներ
- Շապիկներ
- Արմատների ծորանների մշակում
- Մասնակի և ամբողջական պրոթեզներ
- Լնդերի տակի գոյացումների մաքրում և արմատների քերում
- Ատամի հեռացում
- Շտապ օգնության ծառայություններ
- Ամբուլատոր ծառայություններ
- Հանգստացնող միջոցներ (եթե դա անհրաժեշտ է բժշկական տեսանկյունից)

Եթե հարցեր ունեք կամ ցանկանում եք ավելի իմանալ ծածկված Medi-Cal

ատամնաբուժական ծառայությունների մասին, զանգահարեք՝

1-800-977-7307 (TTY՝ 711): Դուք կարող եք նաև այցելել Health Net՝ www.hndental.com

կայքը:



Զանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-800-977-7307 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8:00 - 17:00: Զանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հերթափոխ գծին՝ 711: Կամ այցելեք՝ at www.hndental.com.

Երեխաների և երիտասարդների կանխարգելիչ ատամնաբուժական ծառայությունների ստացման օգնություն

Health Net-ը կօգնի մինչև 21 տարեկան անդամներին ստանալ անհրաժեշտ ծառայությունները: Health Net-ը կարող է՝

- Պատմել ձեզ ծառայությունների մասին
- Գտնել մատակարարներ
- Նշանակումներ կատարել ձեզ համար
- Ապահովել ինսամբի համակարգում՝ ճիշտ ժամանակին ճիշտ ինսամբ ստանալու համար ճիշտ մատակարարից



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1-800-977-7307 (TTY/TDD 711) հեռախոսահամարով: Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 8:00 - 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California-ի հերթափոխ գծին՝ 711: Կամ այցելեք՝ at www.hndental.com.

6. Իրավունքներ և պարտականություններ

Որպես Health Net-ի անդամ, Դուք ունեք որոշակի իրավունքներ և պարտականություններ: Որպես Health Net-ի անդամ, Դուք ունեք որոշակի իրավունքներ և պարտականություններ: Այս բաժնում կան նաև օրինական ծանուցումներ, որոնց իրավունքը Դուք ունեք որպես Health Net-ի անդամ:

Ձեր իրավունքները

Health Net-ի անդամներն ունեն հետևյալ իրավունքները՝

